

**2009 թ. առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետությունում
հանցավորության վիճակի եւ դրա դեմ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների ու
տարածքային մարմինների կողմից տարվող պայքարի մասին**

Հանրապետության ներքաղաքական կայունությունը հնարավորություն է ընձեռնեց ՀՀ ոստիկանությանը ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում լիարժեք կենտրոնանալու ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված խնդիրների իրագործման վրա, եւ պետք է արձանագրել, որ գրեթե բոլոր ուղղություններով ձեռք են բերվել շոշափելի արդյունքներ:

Բացի այդ, ուղենիշ ունենալով ՀՀ Նախագահի հանձնարարականները եւ ՀՀ կառավարության գործունեության ծրագրային դրույթները, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է համակարգված աշխատանքը բնակչության շրջանում ոստիկանության հեղինակության բարձրացման ուղղությամբ: Իսկ վերջինիս հասնելու հիմնական գրավականներից ՀՀ ոստիկանության ղեկավարությունն առանձնացրել է՝ հանցագործությունների եւ այլ իրավախախտումների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումներին պատշաճ արձագանքումը, քողարկված բնույթ կրող հանցագործությունների հայտնաբերումն ու բացահայտումը, պատժի անխուսափելիության հանրահայտ սկզբունքի հնարավորինս լիարժեք իրագործումը, բնակչության մոտ անձնական անվտանգության ապահովվածության զգացման ամրապնդումը, ինչպես նաեւ ոստիկանության ծառայողների առօրյա գործունեությունում օրինականության պահպանումը:

Հենց այս տեսանկյունից էլ ամփոփվել են 2009 թ. առաջին կիսամյակում ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքները:

2009 թ. 1-ին կիսամյակում շարունակվել է ակտիվ աշխատանքը լատենտային բնույթ կրող հանցագործությունների հայտնաբերման (կոռուպցիոն բնույթի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված, տնտեսության ոլորտում կատարված հանցագործություններ եւ այլն), ինչպես նաեւ հանցագործությունները հաշվառումից թաքցնելու արատավոր գործելաոճը բացառելու ուղղությամբ, ինչը մեծապես նպաստել է հանրապետությունում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակի շեշտակի աճին՝ 71,3%-ով կամ 2851 դեպքով (2008 թ. 1-ին կիսամյակում՝ 3998, 2009 թ. 1-ին կիսամյակում՝ 6849):

Հանցագործությունների թվաքանակի նման աննախադեպ աճը պայմանավորվել է նաեւ տուժողի բողոքի բացակայության պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183 հոդվածով կարճված գործերի կամ մերժված նյութերի հաշվառման հանգամանքով (1324 դեպք), ինչպես նաեւ այն փաստով, որ 2091 հանցագործության դեպք, կատարված լինելով նախկին տարիներին, ոստիկանության ջանքերով հայտնաբերվել եւ հաշվառման են վերցվել ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում (2008 թ. 6 ամսում՝ 995):

Հանցագործությունների ընդհանուր թվաքանակի աճի պարագայում, բնականաբար, աճել է նաեւ հանցավորության գործակիցը: Հաշվետու ժամանակահատվածում 100.000 բնակչին բաժին ընկնող հանցագործությունների թիվը հանրապետությունում կազմել է 213, 2008 թ. 6 ամսում՝ 124: Հանցավորության մակարդակը բարձր է Երեւանում (316), Լոռիում (229) առավել ցածր՝ Շիրակում (133), Արագածոտնում (134), Գեղարքունիքում (136) եւ Արարատում (137):

Հաշվետու ժամանակահատվածում 63,2%-ով (1681-ից 2743) աճել է ծանր եւ 48,3%-ով առանձնապես ծանր հանցագործությունների թվաքանակը (87-129):

Հանցավորության ընդհանուր կառուցվածքում աճ է արձանագրվել բոլոր հիմնական ուղղություններով՝ սեփականության (1710-ից 2921), հասարակական կարգի եւ անվտանգության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններով (847-ից 1370), մարդու դեմ ուղղված հանցագործություններով (498-ից 1351), պետական իշխանության, ծառայության ու

կառավարման կարգի (737-ից 818) եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով (189-ից 358):

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների կազմում աճ է արձանագրվել դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերով (247-612), սպանության փորձերով (11-12), բռնաբարության եւ բռնաբարության փորձի (9-10) եւ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններով (29-30): Որպես դրական միտում պետք է դիտել այն, որ այս ոլորտում նվազում է արձանագրվել սպանության (40-34) եւ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերով (111-102):

Սեփականության դեմ կատարված ոտնձգություններում աճ է արձանագրվել բոլոր հիմնական հանցատեսակներով՝ գողության (1259-2147), այդ թվում բնակարանային (331-453), խարդախության (166-353), յուրացման կամ վատնման (30-96), կողոպուտի (74-103), ավազակության (69-91) եւ տրանսպորտային միջոց փախցնելու դեպքերով (27-34):

Պետք է արձանագրել, որ 2009 թ-ի 1-ին կիսամյակի ընթացքում ոստիկանության ստորաբաժանումների կողմից զենքի եւ ռազմամթերքի առգրավման կամ կամավոր հանձնման ուղղությամբ տարվող աշխատանքներն իրենց արդյունավետությամբ գերազանցել են 2008 թ-ի նույն ժամանակահատվածի արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է զենքի եւ ռազմամթերքի ապօրինի շրջանառության 239 դեպք, ինչը գրեթե կրկնակի անգամ ավելի է նախորդ տարվա առաջին կիսամյակի ցուցանիշից (122): Կիսամյակի ընթացքում բնակչության մոտ ապօրինի պահվող հրազենից հանրապետության ոստիկանության մարմիններն առգրավել են 274 միավորը (2008 թ. 6 ամսում՝ 136), իսկ տարված բացատրական աշխատանքների շնորհիվ՝ կամավոր հանձնվել 529-ը (2008 թ. 6 ամսում՝ 196):

Իր արդյունավետությամբ առանձնացել է «Չինանց 2009» հատուկ կանխարգելիչ միջոցառման առաջին փուլը, որի ընթացքում ոստիկանության մարմիններն առգրավել են 64, իսկ տարված բացատրական աշխատանքների շնորհիվ՝ կամավոր հանձնվել է 139 միավոր հրազեն:

Հանրապետությունում քրեածին իրավիճակը ապակայունացնող գործոնների չեզոքացման, զենքի, ռազմամթերքի եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, այլ հանցագործությունների նախականիման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման, ինչպես նաեւ օրինականության ամրապնդման նկատառումներից ելնելով, ընթացիկ տարվա մայիս ամսին առաջին անգամ հանրապետության տարածքում կազմակերպվել եւ իրականացվել է «Վահան» հատուկ կանխարգելիչ միջոցառումը: Նշված միջոցառման արդյունավետության մասին է խոսում այն փաստը, որ ոստիկանության մարմիններն առգրավել են 117, իսկ տարված բացատրական աշխատանքների շնորհիվ կամավոր հանձնվել է 128 միավոր հրազեն, հայտնաբերվել է թմրամիջոցների ապօրինի պահման 66 դեպք, բացահայտվել են 5 տարբեր հանցագործության դեպքեր, հայտնաբերվել են 113 հետախուզվող անձինք, տարբեր վարչական իրավախախտումներ կատարելու համար կազմվել են 18396 արձանագրություններ, 730 ավտոմեքենա տարվել է տուգանային հրապարակ:

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թվաքանակում կանանց մասնաբաժինը կազմել է 11,5%, իսկ ընդհանուր առմամբ, հանցագործություն կատարած կանանց թիվն աճել է 2,7 անգամ (199-531):

Հանցագործություն կատարած անձանցից 90-ը եղել են օտարերկրացիներ (2008 թ. 6 ամսում՝ 30), ընդ որում 55-ը՝ ԱՊՀ երկրների քաղաքացիներ (2008 թ. 6 ամսում՝ 20): Հանցագործություն կատարած օտարերկրյա քաղաքացիների թվաքանակի եռակի աճն, ինքնին, խոսում է այն մասին, որ Հայաստանն արդեն իսկ դարձել է միջազգային հանցավոր խմբավորումների հետաքրքրության առարկա: Այդ են վկայում վերջին ժամանակներում Հայաստանում վնասագերծված արտասահմանյան հանցավոր խմբերը:

Յետաքրքիր է, որ հանցագործության տուժող են հանդիսացել 49 օտարերկրացիներ, որոնցից 19-ը՝ Իրանի, 10-ը՝ Ռուսաստանի, 4-ը՝ ԱՄՆ-ի, 2-ական՝ Վրաստանի, Լիբանանի, Չինաստանի, եւ 1-ական՝ 10-ը այլ երկրների քաղաքացիներ:

Ներկայացնելով հանցագործությունների բացահայտման ուղղությամբ ոստիկանության մարմինների կողմից կատարված աշխատանքները, պետք է նշել, որ հանցագործությունների ընդհանուր թվաքանակի աճի, բնականաբար նաեւ աշխատանքային ծանրաբեռնվածության զգալի ավելացման պարագայում գրեթե բոլոր հիմնական ուղղություններով ընթացիկ տարվա 6 ամիսներին արձանագրվել է ցուցանիշների նկատելի բարելավում: Այսպես, վարույթում գտնվող քրեական գործերով ընդհանուր հանցագործությունների բացահայտման արդյունավետությունն աճել է 9,1%-ով (69,5%-ից 78,6%), քրեական հետախուզության գծով՝ 4,0%-ով (70,2%-ից 74,2%), ծանր հանցագործություններով՝ 7,1%-ով (62,6%-ից 69,7%), առանձնապես ծանր հանցագործություններով՝ 29,1%-ով (50,7%-ից 79,8%):

Բացահայտման աշխատանքների արդյունավետությունը բարելավվել է մարդու դեմ ուղղված հանցագործություններով (78,6%-ից 94,9%), այդ թվում սպանություններով (51,6%-ից 76,2%) եւ սպանության փորձերով (44,4%-ից 80,0%), դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու (75,5%-ից 93,3%), այդ թվում ծանր վնաս պատճառելու (66,3%-ից 79,2%), հասարակական կարգի, անվտանգության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններով (85,2%-ից 90,5%), այդ թվում ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու (59,0%-ից 85,7%), որից մահվան ելքով (72,5%-ից 88,8%), խուլիգանության (87,5%-ից 96,8%), որից կատարված զենքի գործադրմամբ (57,1%-ից 93,8%), իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերով (74,7%-ից 76,4%), սեփականության դեմ ուղղված հանցագործություններով (58,9%-ից 65,7%) եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով (40,0%-ից 68,3%):

Այս ամենի հետ մեկտեղ, հիմնական հանցատեսակներից բացահայտման ցուցանիշների նվազում է արձանագրվել սեռական անձեռնամխելիության դեմ ուղղված հանցագործություններով (95,8%-ից 86,4%), այդ թվում բռնաբարություն եւ բռնաբարության փորձերով (100%-ից 75,0%), անձնական գույքի ավազակության (57,8%-ից 53,1%), կողոպուտի (74,6%-ից 53,9%), տրանսպորտային միջոցներ փախցնելու (53,8%-ից 51,6%) եւ իշխանության ներկայացուցիչի նկատմամբ բռնություն գործադրելու (100%-ից 96,4%) դեպքերի բացահայտման աշխատանքներում:

Պետք է արձանագրել, որ ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում մոտ 3 անգամ աճել է հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզված չլինելու պատճառաբանությամբ նախկին տարիներին կասեցված քրեական գործերով բացահայտված հանցագործությունների թիվը (2008 թ. 6 ամսում՝ 40, 2009 թ. 6 ամսում՝ 115):

Անդրադառնալով լատենտային հանցատեսակներից թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների դեմ պայքարին, հարկ է նշել, որ 2009 թ. 6 ամիսների ընթացքում հայտնաբերվել է 539 նման հանցագործության դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 383-ի դիմաց:

Կտրուկ բարելավվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ հատկապես թմրամիջոցների իրացման դեպքերի հայտնաբերման աշխատանքների արդյունավետությունը: Յաշվետու ժամանակահատվածում հայտնաբերվել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության 535 դեպքեր, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 2,4 անգամ (2008 թ. 6 ամսում՝ 226), իսկ թմրամիջոցների իրացման դեպքերն աճել են ավելի քան 2 անգամ (2008թ. 6 ամսում՝ 107, 2009 թ. 6 ամսում՝ 228):

2009 թ. 6 ամիսներին հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, ապօրինի շրջանառությունից առգրավվել է 21 կգ 693 գրամ թմրամիջոցներ:

ՀՀ ոստիկանության ղեկավարությունը գտնում է, որ «2009-2012 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի» Ազգային ծրագրի ընդունումով էլ ավելի կիսթանվեն ոլորտում իրականացվող աշխատանքները, նոր հիմքերի վրա կդրվեն շահագրգիռ գերատեսչությունների գործունեության համակարգման խնդիրները:

Հետեւողականորեն շարունակվել է պայքարը մի այնպիսի երեւոյթի դեմ, ինչպիսին է մարդկանց ապօրինի փոխադրումը (տրաֆիկինգը), ինչի արդյունքում ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից հրապարակված տրաֆիկինգի վտանգ ներկայացնող երկրների համաշխարհային դասակարգման մեջ Հայաստանը 2-րդ վերահսկվող ցուցակից փոխադրվեց առավել շահեկան 2-րդ խումբ:

Հակիրճ անդրադառնալով հաշվետու ժամանակահատվածում նշված ոլորտում կատարված աշխատանքին, նշենք, որ 2009 թ. առաջին կիսամյակի ընթացքում հանրապետությունում բացահայտվել է կանանց պոռնկության ներգրավելու եւ շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման 8 դեպք (2008 թ. 6 ամսում՝ 5), որից 7-ը՝ ԿՀԴԴԿԿ, իսկ 1-ը՝ ԶՀԿԿ կողմից: Ի դեպ, տրաֆիկինգի կանխարգելման աշխատանքներում միջազգային համապատասխան կառույցների համագործակցության բարելավման խնդիրը, ի թիվս թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ անօրինական միգրացիայի ոլորտում առկա հիմնահարցերի, քննարկվեց Երեւանում ս.թ. ապրիլի 15-ին ՀԱՊԿ ՆԳ նախարարների անդրանիկ հանդիպման ժամանակ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության օպերատիվ ծառայությունները եւ տարածքային մարմինները, համագործակցելով հանրապետության մյուս իրավապահ մարմինների հետ, հայտնաբերել են տնտեսական գործունեության դեմ ուղղված 358 հանցագործության դեպք (2008 թ. 6 ամսում՝ 189):

Իրագործելով ՀՀ Նախագահի հանձնարարականի, ինչպես նաեւ ՀՀ Կառավարության գործունեության ծրագրային դրույթները, ՀՀ իրավապահ մարմինների կողմից տարվել է զգալի աշխատանք կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում: Արդյունքում 2009 թ. 6 ամիսների ընթացքում հանրապետության իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվել են կոռուպցիոն բնույթի 229 հանցագործության դեպքեր, որոնցից 107-ը բաժին է ընկնում ոստիկանությանը: Կաշառակերության 31 եւ առետրային կաշառքի 2 դեպքերից 17-ը ի հայտ է բերվել ոստիկանության ջանքերով:

Որոշակիորեն բարելավվել է փախուստի մեջ գտնվող հանցագործների հետախուզման եւ անհայտ կորած անձանց հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը: 2009 թ. առաջին կիսամյակի ընթացքում ոստիկանության մարմինների կողմից հետախուզվող հանցագործներից հայտնաբերվել են 830-ը (2008 թ. 6 ամսում՝ 810-ը), որոնցից 20-ը հետախուզվել են սպանության, 1-ը՝ բռնաբարության, 15-ը՝ ավազակության, 6-ը՝ կողոպուտի, 43-ը՝ գողության, 63-ը՝ խարդախության, 28-ը՝ խուլիգանության եւ 23-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ՀՀ ոստիկանության զորքերը, արտաքին ծառայության ստորաբաժանումները եւ, ընդհանրապես, համակարգի ողջ անձնակազմը կատարել են իրենց առջեւ դրված խնդիրները, ձեռնարկել են միջոցներ օպերատիվ իրավիճակի կայունությունն ապահովելու, հանրապետությունում կարգուկանոնը պահպանելու ուղղությամբ:

2009 թ. ապրիլ-մայիս ամիսներին ոստիկանության անձնակազմի, եւ հատկապես արտաքին ծառայության ստորաբաժանումներում ընդգրկված ծառայողների ուժերով պատշաճ հասարակական կարգ եւ անվտանգություն է ապահովվել Երեւան քաղաքի ավազանու նախընտրական քարոզարշավի եւ ընտրությունների անցկացման ժամանակ:

Ընդհանուր առմամբ, արտաքին ծառայության ստորաբաժանումներում ընդգրկված աշխատակիցների ուժերով 2009 թ. 6 ամիսների ընթացքում պատշաճ

հասարակական կարգ է ապահովվել 729 զանգվածային միջոցառումների անցկացման ժամանակ:

Բացի այդ, ոստիկանության արտաքին ծառայության ուժերը զգալի աջակցություն են ցուցաբերել պետական մարմիններին՝ ապօրինի անտառահատումների, ձկնորսության դեմ պայքարում, ինչպես նաև 2009 թ. գարնանային գորակոչը անցկացնելիս: Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության մարզերում ապօրինի ձկնորսության եւ ապօրինի անտառահատումների դեմ տարվող կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով ՀՀ բնապահպանության եւ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են համատեղ ստուգայցեր, որոնց արդյունքում ապօրինի ձկնորսության 21 եւ ապօրինի անտառահատումների 12 դեպքերով հարուցվել են քրեական գործեր:

2009 թ. 1-ին կիսամյակի ընթացքում ճանապարհային ոստիկանության ծառայությունը զգալի կազմակերպչական եւ կանխարգելիչ բնույթի աշխատանքներ է իրականացրել ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման, ճանապարհատրանսպորտային պատահարների նախականիման ուղղությամբ, եւ պետք է արձանագրել, որ ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը նվազել է՝ առաջին անգամ վերջին վեց տարիների ընթացքում: Այսպես. 2009 թ. 6 ամիսների ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է 867 ճանապարհատրանսպորտային պատահար (2008 թ. 6 ամսում՝ 909), որի հետեւանքով զոհվել է 150 (2008 թ. 6 ամսում՝ 174) եւ մարմնական վնասվածքներ ստացել 1218 (2008 թ. 6 ամսում՝ 1337) մարդ, պատահարների քանակը նվազել է 42-ով կամ 4,6%-ով, վիրավորների թիվը նվազել է 119-ով, իսկ զոհերի թիվը՝ 24-ով:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ճանապարհապարեկային ծառայության կողմից հայտնաբերվել է ճեփ-ի 306.155 խախտում, անցած տարվա նույն ժամանակահատվածի 172.106-ի դիմաց: Ավտոտրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկվել է 33 մարդ (2008 թ. 6 ամսում՝ 21):

Բնակչության շրջանում ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացման առումով ՀՀ ոստիկանությունը խիստ կարեւորում է նաև յուրաքանչյուր ծառայողի կողմից օրինականության պահպանման խնդիրը, ինչին հասնելու համար պետք է հիմնովին վերակառուցել ՀՀ ոստիկանության գործելաոճը, ձեռնարկել միջոցներ ոստիկանության ծառայողների շրջանում քաղաքացիների հետ բարեկիրթ վերաբերվելու կուլտուրա սերմանելու, գործունեության ընթացքում օրինականության անշեղ պահպանման ուղղությամբ: Արձանագրենք, որ 2009 թ. 1-ին կիսամյակի ընթացքում ոստիկանության ծառայողին ոչ վայել արարք կատարելու համար 35 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, տարբեր հանցագործություններ կատարելու համար քրեական պատասխանատվության են ենթարկվել 6 ծառայողներ:

Ընդհանուր առմամբ, կարգապահական տույժի են ենթարկվել 456 ծառայողներ, որոնցից 20-ը ազատվել են ոստիկանությունից, պաշտոնն իջեցվել է 4-ի, կոչումն իջեցվել է 5-ի, զգուշացվել են պաշտոնին ոչ լրիվ համապատասխանելու մասին 11 ծառայողներ եւ այլն:

Ամփոփելով 2009 թ. 1-ին կիսամյակում կատարված աշխատանքները, ոստիկանության ղեկավարությունը հավաստիացնում է, որ կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունն էլ ավելի բարձրացնելու, անձնակազմի շրջանում օրինականությունն ու կարգապահությունն ամրապնդելու ուղղությամբ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ